Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Դատավորների հավակնորդների՝ քաղաքացիական

մասնագիտացման ոլորտում որակավորման

գրավոր քննության արդյունքների բողոքարկման վերաբերյալ

26.11.2020 թվական քաղաք Երևան

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝

Նախագահ՝ Էդգար Հովհաննիսյան (դատավոր)

Անդամներ՝ Լիզա Գրիգորյան (դատավոր)

Գևորգ Պողոսյան (իրավաբան-գիտնական)

գաղտնի և դռնփակ ընթացակարգով, բողոքարկման դիմումի հիմքերի և հիմնավորումների սահմաններում իրականացնելով գրավոր աշխատանքի վերստուգում,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկման հանձնաժողովին է ներկայացվել անանուն, կոդավորված երեք ծրար՝ բողոքարկվող դիմումներով և գրավոր աշխատանքներով:

Բողոքարկման հանձնաժողովը, վերստուգելով թիվ **4936** գրավոր աշխատանքը, գտնում է, որ քննության արդյունքների դեմ ներկայացված բողոքը ենթակա է բավարարման մասնակի՝ հիմք ընդունելով ստուգաթերթերում արձանագրված նշումներն ու մեկնաբանությունները:

Գնահատման հանձնաժողովը թիվ **4936** ծածկագրով գրավոր աշխատանքը գնահատել է ընդհանուր **39** միավոր, որից նյութական իրավունքի հարցի գնահատականը՝ 18 միավոր, դատավարական իրավունքի հարցի գնահատականը՝ 21 միավոր:

Բողոքարկման հանձնաժողովը, ամփոփելով վերստուգման արդյունքները, գտնում է, որ թիվ **4936** գրավոր աշխատանքի ընդհանուր գնահատականը ենթակա է բարձրացման 7-ով, որից նյութական իրավունքի մասով՝ 3 միավոր, դատավարական իրավունքի մասով՝ 4 միավոր: Վերստուգման արդյունքում գրավոր աշխատանքի ընդհանուր գնահատականը կազմում է **46** միավոր, որից նյութական իրավունքի մասով՝ 21 միավոր, իսկ դատավարական իրավունքի մասով՝ 25 միավոր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի 14.09.2020 թվականի թիվ ԲԴԽ-60-Ո-137 որոշմամբ սահմանված կարգի IV գլխի 32-34-րդ կետերով, Բողոքարկման հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքարկման դիմումը բավարարել մասնակի:

Վերստուգման արդյունքում թիվ **4936** ծածկագրով գրավոր աշխատանքի միավորը բարձրացնել 7-ով, որի արդյունքում ընդհանուր գնահատականը սահմանել **46** միավոր:

Նախագահ՝ Էդգար Հովհաննիսյան

Անդամներ՝ Լիզա Գրիգորյան

Գևորգ Պողոսյան